լինելու մի յաջողակ միջնորդ՝ լուսաւոր աշխարհների կրթութիւնը Ասիայում տարածելու: «մենք մօտեցանք Ասիային մեր միսիոնարներով ու աւետարանով, — ասաց նա, — եւ դրանով աւելի զայրացրինք նրանց, որովհետեւ կրօնական աւանդապահութիւնը, դարերի ընթացքում, խիստ խորին արմատներ է ձգել նրանց մէջ: Մենք դիպանք նրանց հոգու եւ զգացմունքների ամենափափուկ լարերին եւ դրանով զզոանք յարուցինք նրանց մէջ՝ թէ դէպի մեզ, եւ թէ դէպի այն լոյսը, որ տարածել էինք ուզում: Մենք մեր միսիոնարների ձեռքով կատարեցինք մի վատ ծառայութիւն՝ ուրիշի տան մէջ երկպառակութիւն ձգեցինք: Փորձենք ձեռք մեկնել Ասիային ճշմարիտ գիտութեան եւ լուսաւորութեան առաքեալներով, այն ժամանակ, ես հաւատացած եմ, որ նրանք կը սիրեն մեզ: Թո՛ղ տանք կրօնի գործը իրանց: Ասիան, կրօնքների հեղինակը, գիտէ իր համար նոր կրօնքներ ստեղծել, եթէ այդ պէտք է նրանէ: Նա վերջացրեց իր դասախօսութիւնը այդ խօսքերով. «ասիան տոեց մեզ գիտութեան նախագիտելիքները եւ ինքը ծերացաւ անշարժութեան մէջ: Մենք նրա յառաջադէմ աշակերտներն ենք: Երախտագիտութիւնը պահանջում է, որ մենք տոկոսներով վերադարձնենք մեր ծերունի վարժապետին մեր ստացածը, որպէսզի նա դարձեալ մանկանայ նոր աշխոյժով եւ նոր կեանքով: Եւ ես այդ նպատակով բերեցի խորին Ասիայից այդ մանուկներին, որ այժմ զարդարում են իմ ամբիոնի շուրջը... Խուռն ծափահարութիւն թնդացրեց ընդարձակ դահլիճը: Այդ միջոցին հանդիսականներից չորս հոգի մօտեցան դասախօսին, սեղմեցին նրա ձեռքը, առաջարկելով, թէ իրանցից իւրաքանչիւրը կը ցանկանար մեզանից մէկին որդեգրել եւ իր հաշոով ուսում տալ: Ինձ վեր առեց մի այրի կին: Կարօյին վեր առեց մի կալուածատէր. Սագօյին վեր առէք մի գործարանատէր, իսկ Ռափայէլին, այդպէս էր հնդկացի պատանիի անունը, վերառեց մի արհեստաւոր:

— Մենք բաժանուեցանք, բայց կիրակի եւ տօն օրերին տեսնւում էինք միմեանց հետ: Իմ բարերարուհին յայտնուեցաւ մի շատ բարեպաշտ եւ առաքինի կին: Նա ամուսնից բաւական մեծ ժառանգութիւն էր ստացել, եւ այդ ժառանգութիւնը պէտք է մնար նրա երկու աղջիկներին, որոնցից մէկը տասնեւոեց տարեկան էր, իսկ միւսը տասնեւութ տարեկան: Նրա աղջիկները մօր քնքուշ սիրտն էին կրում: Բարեպաշտ կինը ամէն հնար գործ էր դնում, որ ես հայրենիքի կարօտութիւն չզգամ, որ միշտ ուրախ լինեմ: Նրա գութը աւելի եղաւ դէպի ինձ, երբ իմացաւ, որ ես մի որբ տղայ եմ, երեխայութիւնից զրկուած եմ եղել իմ ծնողներից: Մի օր ամբողջ քաղաքը որոնել էր նա եւ վերջապէս գտել էր մի զմիւռնացի հայ ընտանիք: Այդ ընտանիքի հետ ծանօթացաւ նա, խնդրում էր միշտ իր տունը յաճախել, միայն ինձ հաճեցնելու հա-